# *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ*
# *ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ*
# *ՀՈՌՈՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ*

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2

22. փետրվար 2011թ

ՀՈՌՈՄ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ ԲՆԱԿԵԼԻ ԱՌԱՆՁՆԱՍՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱԽՋՓ

Հիմք ընդունելով Հոռոմ գյուղի բնակիչ Հարություն Պապիկյանին դիմումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության« Տեղական Ինքնակառավարման Մասին »օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի պահանջներով՝ որոշում եմ.

Հոռոմ գյուղի բնակիչ Հարություն Պապիկյանին թույլատրել իրականացնել բնակելի առանձնատան շինարարություն:

Հոռոմի համայնքի ղեկավար՝ Ս.Դավթյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ՀՈՌՈՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 3

25- Հուլիս 2011թ

ՀՈՌՈՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ-Ի ԲՅՈՒՋԵԻՑ ԾԱԽՍ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հոռոմ համայնքի ավագանու 26.01.2011թ-ի թիվ 1 Ն որոշումով հաստատված համայնքային բյուջեն՝ այլ մշակույթային միջոցառումներ բաժինը՝ Հոռոմի համայնքի նախակրթարանի սաների« Հրաժեշտ մանկապարտեզին» միջոցառում կազմակերպելու նպատակով՝ որոշում եմ.

2011թ- Հոռոմ համայնքի բյուջեի այլ մշակութային միջոցառումներ 08.2.4. դասակարգմամբ 4239 հոդվածից հատկացնել 42.0 հազ դրամ գումար:

Հոռոմի համայնքի ղեկավար՝ Ս.Դավթյան

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ*
## *ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ*
## *ՀՈՌՈՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ*

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 4

9 Օգոստոս 2011թ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՌՈՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 29.08.2006թ-ի « Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» թիվ 13- Ն հրամանը և ղեկավարվելով« Համայնքային Ծառայության Մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հոռոմի համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-2/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթը նշանակել 2011թ-ի սեպտեմբերի 16-ին ժամը $15^{00}$ համայնքի գյուղապետարանի շենքում:
2. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակել մամուլի և զանգվածային տեղեկատվության այլ միջոցներով:
3. թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքները իրականացնել համայնքի ղեկավարի աշխատակազմի միջոցով:

Հոռոմի համայնքի ղեկավար՝ Ս.Դավթյան